



Կայսրական տարածության մաս եղանակ
գույք Հիմք եւ ի էւ ։
Տարեկան գիշեալ 24 ը դ ։
Ամառաւոյ 12 ը դ ։
Մայիս հայր 40 ի դ ։

I. R. C. S. T.

Արքայի ու զարդարագրութիւն
գույք Երեւան լուսաւորաց բարձր
ի մատուցութիւն պատվիրաց ճամփան ։
Արքայի ու զարդարագրութիւն
առ ի մատուցութիւն պատվիրաց ճամփան ։

Ռ Պ Ֆ Ո Ւ Խ Կ Ս Ե Ը Օ Վ Ո Յ

Ե Տ Ե Ր Ա Բ Ի Ֆ 17 1864 ։ Մ Ե Յ Ի Ո ւ

Ազնիւ Ռ Ա Թ Ե Ր Ո Ղ Ջ

Դժբաղդ Արծուիկ այնինչ ինքը եր-
րեւ հրեշտակի ձայն կ արձակեր արթնու-
թիւն կ կարդար թմրած սիրատերուն ։ արթ-
նութիւն ի լուսաւորութիւն ։ ահա զինքն
ալ թմրեցուցին ։ գոցուեցան իւր աշերք ։
լըռեցին շրմունքները դադրեցաւ թոհիք ։
նաշեց Արծուիկն ալ բայց ոչ խօսառ ։ և ըն-
ջեց եւ ոչ իրու մեռեալ յաւիտեան ։ ։ ։
Այլ եղաւ նա ինչպէս մանուկ խանձար-
րած յօրօրանի կամ իրերւ Պազարոսի գե-
րեզմանի ։

Պարնան առաւօտ զուարթութիւն կ ցո-
ղէ իրեն ։ Թոշոց դայլայլիկը կ զարթու-
ցանէ զինքը ։ մայիսը ծաղիկներով կ զարդա-
րէ լիսն ու հոփիտները ճանապարհ կ հոր-
դէ ։ կ պարզէ օդեր ։ եւ զինքը սիրողներ
ձայն կուտան ։ Արծուիկ զարթիր ի քնյ ։
արի ի գերեզմանէ ։ ։ ։ ։

Զմեռ մի եր անցաւ ։ զիշեր մի եր լու-
սացաւ ։ դեպք մի եր պատահեցաւ ։ ։ ։
եւ ահա կ ծուշի Արծուիկ յօդով օծած
իւր զլուխը կայտաելով ու խանդաղատե-
լով կ դիմէ զինքը սիրողաց ի գերկ ։

Ասահ է օր կընդունեն զինքը ։ կ խնդրէ
որ ներեն իրեն ։ մանաւանդ թէ աւելի ըս-
փոփին ու քաջալերեն ալ զինքը ։ վաս զի-
նքը զանդաղ չէր ։ ինքը պատճառ չէր ։ ։
Եւ իւր խմբագիրը որ աշուն իրմէն գնաց
ի Պալիս ասրագիր ։ Եւ որ յայնժամ ձեզ
մնաք բարովը ասաց ։ այժմ կ ողջունէն եւ
կ ծանուցանէ իւր վերադարձը ։ Ինքը պի-

տի խմբագրէ ու հրատարակէ կրկին այն
թերթերը առանց բնաւ գովինդութիւն մը
տալու իւր գրից սկզբանոց եւ ընթացից ։
Եւ բանզի տարեկան շրջան 24 թիւ ը լը-
րացնելու համար գեռ 8 թիւ կ պակսի ։
ուստի 177 թիւէն մայիս կ շարունակենք
մինչեւ լրանայ պակասորդն ։ Եւ ուր վեր-
ջանայ առաջին շրջանը ու սկսի երկրորդը ։
այն ամիս պէտքէ համարենք Արծուիկին
տարիկը կը լու իւր ։

Տարօնոց եւ Ա. Ա. Ա անքիս

Նոր կարգադրութիւններ ։

Թողլով յետս ամէն անկարգութիւնները
որոնք անցան այս աշխարհիս եւ այս վանա-
քիս մէջ լոնք անոնց երեսէն ծաղած վրա-
նաներուն եւ ցաւերուն վրայ ։ Եւ վու-
թանք ծանուցանել համառօտմը ։ այս վեր-
ջին տնօրենութիւնները գրիս յօդուած ազ-
գին ի շինութիւն վանքին եւ ի խաղաղու-
թիւն ամենեցուն որոշից Ա ։ Պօլոյ Ազ-
գային Այսմանադրական վարչութիւնը ։
Ա ։ Հայրիկի վրայ եղած ամէն ամբաս-
տանութիւնները քննեց ։ Հայրիկի անմեռ-
զութիւնը Բ ։ գրան ծանոյց արդա-
րութեամբ ։

Բ ։ Արոշեց զատեց Մշց քաղաքական
առաջնորդութիւնը Ա. Ա. վանուց վանա-
հայրութիւննեն գեր ։ Արեմիս Ա. Առաջնորդ
Բաղից կարդ եց միսնամսոյն եւ Ասաշ-
նորդ Մշց իսկ Ա. կարապետի վանահայ-

բութիւնը յանձնեց Հայրիկին :

թէ ինչ մեծ օգուտ կայ այս նոր կարգադրութեան մէջ . եւ թէ ինչ մեծ ուղղութիւն և յառաջադիմութիւն պիտի ունենայ այսպէս Տարօն եւ լլ . Արտապետ այսուհետեւ , կ խոստանամք յաջորդ թըւով մեր գիտածի շափ հաղորդել մեր ընթերցողաց :

Դ . Արշեց որ Հայրիկ փոքր ինչ եւս ի Պալիս մնայ . եւ Ա . Կարապետի միաբանութենէն չըս գարդապետի Պալիս կանչեց . որ ի միաօին կանոնադրութիւն գրեն վանքիս բարեկարգութեանց համար :

Ե . Միաբանութենէն երեք վարդապետ ընտրեց , զորս եւ Տնօրէն ժողով կազմեց . որը յանուն վանսհօր լիազօր արտօնութիւն ունին զվանք կառապարելու , մինչեւ գայ Հայրիկ :

Ասոնց ամենու համար պաշտօնական գըրբեր եւ Պատրիսրբական հօնդակ արդէն հասան աելու գնր . Լրեմիա վարդապետին ձեռքը . որոց գործ ադրութեանը անմիջապէս ձեռնարկեց նախ ի ԱՌոշ , ուր ի գըտնուեր արդէն փրամանորդաբար : Ուրսխութեամբ եւ գոհութեամբ տեսանք Արքին սրբութեան ազգաօիրական խաղաղատիրական շանքը ու խոհեմ և զգուշ ընթացքը . որով շուտ պիտի վաստիկ եւ արդէն վաստրկած կերեւ ի ժողովութեան համակրութիւն ու համարումը :

Ապրիլ 25 էր , գեր . Առաջնորդն , Արմիկոնեան մեծ սարդ Վարդան աղան և Մըշյ Ազգային ժողովոյ անդս մները միասին առած ի վանքու էկան . այստեղն ալ պաշտօնական գիրեր . կարդացուեցան եւ բացատրուեցան . եւ թէ գեր . Առաջնորդն թէ Ա արդան աղան ամենայն բարեմտութեամբ խօսիլ սկսան ազգու եւ ճշմարիտ բարբառով ի Հնազանդութիւն եւ ի խաղաղատիրութիւն յորդութելով . իրենց նւ բոլոր ազգի սկսի յաւրաց կրաքի նոր միաբանութեան վրայ՝ ու փափագը նոր սիրոյ նոր միաբանութեան վրայ , միանգաման եւ ազգ . Վարչութեան կամքը յայտնեցին . ապա գոյուած Առաջնորդարանի դըռները բացուեցան :

Ազուանեան արժ . Դրիգորիս վարդապետի փրամանորդութեան ծափուց եւ եւ կամուց տօմարներ քննուեցան , հաշիւներ

տեսնուեցան . քանիմ գլխաւոր պաշտօններ ու պաշտօնակալներ որոշուեցան . Տնօրէն ժողովոյ , երեք անդամոց օգնական եւ ընկեր երկու վարդապետ ալ ընտրուեցան . գպոց նոյն ի նորոյ բարեկարգուեցաւ . եւ ամէն բան իր կարգ՝ ու ամէն անձը իր խաղաղութիւն գտաւ , իր պարտաւորութիւն յանձն առաւ :

Երժանապատիւ միաբանութիւնն ալ այս ամէն կարգադրութեանց եւ Տնօրէն ժողովոյ կառավարութեանը ընդունող ու հնագանդ մնալ ապահովցնելու համար՝ խաղաղատիրական հոգւով գիրմը կնքեց ու արշվաւ առ գեր . Լրեմիա վարդապետ՝ որպէս զի այսուհետեւ որ եւ իցէ կերպիւ որ եւ իցէ անձը եթէ առիթ կամ ձեռնամուխ լինի նոր խռովութեանմը կամ անկարգութեանմը , սցնապիսին արտաքսուի միւ արանութենէն , եւ ոչ ոք կուռակից կամ պաշտպան գտնուի անոր ապա թէ ոչ , նոյն պաշտպանն ալ պաշտպանելիին յանցանաց եւ պատժոյն կցըրդ համարվի , այսպէս թող չզոհվի բոլոր միաբանութեան պատիւնուանունը մասնաւորաց պատճառաւ . եւ այս կերպով իր պակսեցուցած համարումն ալ կրկին վաստկի ազգին առաջ :

Դործեր մինչեւ ցասա հասան՝ եւ դեռ կ կարգադրուին . թերթիս վերջը կ գրենք մնացեալլ :

Մենք դաւանանք այս նոր սիրոյ նոր ու խոտիս վրայ մեր սւրախութիւնը յայտնել . Երժ . միաբանութիւնը ժողովել . այստեղն է որ իրենք ազգի պատոյն եւ ժողովրդենէն . « Հայր ուրբայ կողուելուն արդարեւ արժանի կը հանդիսանան . այստեղն է որ իրենց վանահայր Հայրիկին հետմէկ անձ և մէկ կամք լինելով վանքիս շինութեան եւ բարեկարգութեան , ժողովրդոց կրթութեան եւ բարութեան համար աշխատին . եւ բոլոր ազգ այնք պիտի ու բախ լինին , յոյսերնին մեծցունեն ջանքերնին շատցունեն : Խըռանգասէրներ եւ այն հոդիներ՝ որ այսպիսի ազգ ավելաց ու պատուակորոյս միջոցներ . կը սիրեն ու իրենց շահը կ հանեն , թող ամաչեն ու երկնչին իրենցմէ . վասն զի ալ այսուհետեւ Քաղաք ի վերայ լերին է , ոչ կարէ թագչէլ . Ճրագ ի վերայ աշխանակին է , լցու է ամէն աել .

տարի պարտքը հատուցանել :

Բ. Եթէ պարտք տուօղ չլինի, առանց ամուսնանալու պիտի երթայ ի պանդիտութիւն, եթէ Աստուած յաջողութիւն տոց քանիմ տարիէն ետքը քանիմ զուրուշ ձեռք կի յնայ, վազէ վազ կ դառնայ. եթէ բազդ ունի, զաղջիկ գեռ եւս աղջիկ կ գանայ ու շալսն տալով կ ամուսնանայ. իսկ եթէ աղջիկ տուած են ուրիշիմը, այնուհետեւ որը տակոտոր կ մնայ, աղջիկն ալ իրեն չ սիրած փեսային քով երբեմն կ խռովի, երբեմն կը կառին, երբեմն կ հիւանդանայ, երբեմն կ գանգատի : Փեսան ալ երբեմն կ զայրանայ, երբեմն կ ծեծէ, երբեմն կ զրկէ : Նա իրոյ կուտայ, ծնօղաց կերթայ . ուրիշ ճանապարհներ կ քալէ . իր երիկ լուծելու բողոքներ կընէ . վերջապէս մի գժառութիւն, Աստուած հեռու անէ : Աստեղ օրինակներ գժբաղդաբար յաձախ կ տեսնանքայ կողմերը : Հապա ցաւալին ասեմք, եթէ ասոր բողոքը չլսուեցաւ իր ծնօղքէն կամ գեղի մեծերէն կամ առաջնորդէն . յայնժամ բողոքը կ փոխարկէ յուսահատ զրութիւն կամ անձարութիւն . եւ կ դիմէ մինչեւ անգամ քրդերուն՝ կամ պաշտպանվելու, կամ անոնց հետ լինելու : Վայ Դալանին, չասեմ ագահ հայրերին . որ այսպիսի չարեաց առիթ է :

(Կարունակութիւն)

Անքիս վերջին կարգադրութիւն
եւ քանիմ տեղեկութիւններ :

Պաշտօնական գրով ի Պօլիս կանչուած չորս վարդապետներ պատրաստուեցան որ անմիջապէս ճամբայ ելնան, որպէս զի վաղվազակի հոն հասնին, վանքի կանոնազբութիւն վայթ շինուի, ամէն բան լմայ . եւ վանահայրը Հայրիկ շտապի մերագառնալ տեղս հասնիլ . նոյն կանոնադրութիւնները գործադրել եւ ուխտիս ամէն պահասութիւններ պէտքեր ու կարեւորութիւնները հոգացվին . որոնք վանահօր բացակայութեան եւ անցած խռովութեանց երեսէն տեղիք ունեցած եւ ծանրացած են վանքիս վրայ :

Այսպէս եւ այսչափ ջանացին ու կար-

գաղրեցին գեր. Երեմիա վ. եւ իրեն հետ եղով բարեսեր . ու խաղաղասէր անձինք . սրաց առ հասարակ վայելէ պատիւ ու գովութիւն . սոյնպէս եւ արժ . Միաբանութեան , որոնք սիրեցին ու ըստ ամենայնի զիրենք արժանի ցըցուցին .

Տարօնյ մէջ Այսմանադրութիւն գործադրելու համար Պօլիսէն Ազգ . Արշութենէն պաշտօնական գրերու հետ նաեւ Բ. գոնէն առ տեղուսու վսեմ . գայմագամն հովարտակ հասաւ գեր . Երեմիա վարդապետին ձեռքը . վասնորց վազվաղեցի Մուշ գնաց զԱյսմանադրութիւն գործադրել , որ մինչեւ ցարդ անխաղաղութեան առթիւ յետս մնացած էր :

Ուրիշ կողմերու նայելով այս տարի Մշոյ աշխարհը ձմեռ թեթեւ է անցեր եւ շուտ բացվել . բայց չափազանց անձրեւներու առթիւ մինչեւ ցարդ գլեթէ վար ու ցանք շատ քիչ է եղեր :

Յորենը թանգ է , չափը 100 դուրուշի կ ծախուի, սոյնպէս թանգ են եւ միւս տեսակ հացեղէնք :

Այս առթիւ ժողովուրդ նեղութիւն ունի կենցազավորս թեան մասին . թէ Մըշոյ թէ վանայ եւ թէ ասոնց մերձակայ գաւառներու մէջ . վան զի կ լսենք թէ այն կողմերն ալ եթէ ոչ այսչափ գոնէ քան զայս քիչ թանգութիւն կայ :

Մշոյ մէջ երեւելի եւ մեծապատիւ Մամիկոնեան վարդան աղան (Սմանեան բարեխնամ տէրութենէն 57 կարգի Մեծիտիկ պատուանցանը ընդունեց՝ միջնորդու ևթեամբ Ասիոյ բանակի սպարապետ Վահմափայլ Մուստաֆայ փաշային , ի փոխարինութիւն հաւատարիմծառայութեան :

Խմբագիր Տարօնյ Արծուիկիս
Պ. Արուանձտեանց, Ճետ Ա. Արծուոյն :